ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ԱՐՄԵՆ ՍԹՈՒՆ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Արարատի մարզի Վեղի համայնքի Գոռավան բնակավայրի վարչական տարածքի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի «Սալաքար» տեղամասի օգտակար հանածոյի հանքարդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ առաջին քննարկում /1-ին լսում/ :

Վեղի համայնք Գոռավան բնակավայր: 02.05.2025 թ.

2025 թվականի ապրիլի 29-ին ժամը 12:00-ին ՀՀ Արարատի մարզի Վեղի համայնքի Գոռավան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում /գյուղ Գոռավան, Գևորգ Մարզպետունի 12/ տեղի ունեցավ «ԱՐՄԵՆ ՍԹՈՒՆ» ՍՊ ընկերության /այսուհետ նաև՝ Ընկերություն/ կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Վեղի համայնքի Գոռավան բնակավայրի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի «Սալաքար» տեղամասի օգտակար հանածոյի հանքարդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ առաջին հանրային քննարկում /1-ին լսում/:

Հանրային քննարկմանը մասնակցում էին ՀՀ Արարատի մարզի Վեղու համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և Բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը, համայնքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ներկայացուցիչներ, Գոռավան բնակավայրի վարչական ղեկավարի պարտականությունները կատարող՝ Մ. Խոստեղյանը և գյուղի բնակիչներ, Ընկերության փոխտնօրեն՝ Հ. Գոմկցյանը և Ընկերության այլ ներկայացուցիչներ:

Հանրային քննարկումը /1-ին լսումը/ բացեց և խոսքով հանդես եկավ Վեղու համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և Բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը, և հայտնեց, որ ՀՀ կառավարության 19.11.2014թ. թիվ 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով (այսուհետ նաև՝ Կարգ) կազմակերպվել և իրականացվում է Ընկերության կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Վեղի համայնքի Գոռավան բնակավայրի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի «Սալաքար» տեղամասի օգտակար հանածոյի հանքարդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ թվով 1-ին հանրային քննարկումը /1-ին լսում/:

Ղեկավարվելով Կարգի դրույթներով, Վեղի համայնքի ղեկավարի կողմից հանրային քննարկումների պատասխանատու է նշանակվել Վեղու համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը :

Վեղու համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Շ. Բաքոյանը, նշեց, որ քննարկվող հարցի շուրջ 1-ին հանրային քննարկումն է /1-ին լսում/, վերջինս առաջարկեց ձեռնարկողին հանդես գալ համապատասխան զեկույցով, որից հետո կիրականացվեն քննարկումները:

Ելույթ ունեցավ Ընկերության ներկայացուցիչ՝ Գ. Հակոբյանը, վերջինս ներկայացրեց հաշվետվությանը վերաբերող հարցեր, որից հետո անցան քննարկման փուլին:

Վեդու համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Շ. Բաքոյանը հարցեր ուղղեց Ընկերության ներկայացուցիչներին՝

1. Հանքավայրը որքան տարածք է զբաղեցնելու .
2. Հանքավայրի տարածքը արոտավայր է, թե՞ ոչ
3. Գոռավան բնակավայրից որքան հեռավորության վրա է գտնվում նախատեսվելիք հանքավայրը.
4. Հանքավայրի հումքը հանքավայրից տեղափոխվելու է արդյոք թ՞ե ոչ, և օգտվելու եք արդյոք համայնքային ճանապարհներից.
5. Կանաչապատման Ձեր տեսլականը՝ կլինի արդյոք հանքավայրին փոշեպաշտպան կանաչ գոտի.
6. Ինչպես եք կարգավորելու ծանր բեռնատարների գերբեռնվածությունը.
7. Փոշեզանգվածի կառավարման ինչ մեխանիզմ եք կիրառելու,լինելու է արդյոք ջրցան մեքենա, թե ոչ.
8. Որքան աշխատատեղ է լինելու, և արդյոք ազդակիր համայնքից, բնակավայրից ընդգրկելու եք գործավորներ.
9. Հումքը որտեղ է վերամշակվելու և վերջնական արտադրանք դառնալու.

Հարցերին պատասխանեց Ընկերության ներկայացուցիչ՝ Գ. Հակոբյանը հայտնելով, որ ընկերության կողմից նախատեսվում է ստեղծել նոր՝ **10-15** և ավելին աշխատատեղ, ընդգրկելով ազդակիր Գոռավան բնակավայրի և Վեդի համայնքի բնակիչներին:

Նշեց, որ հանքավայրը գտնվում է Արարատի մարզի Վեդի համայնքի Գոռավան բնակավայրի վարչական տարածքում, և նշեց վերջինիս հեռավորությունը հանքավայրից՝ **0.5-1.0** կմ.է: Հանքավայրը գտնվում է բարենպաստ ճանապարհատրանսպորտային պայմաններում:

Հաջորդիվ Գոռավան բնակավայրի վարչական ղեկավարի պարտականությունները կատարող՝ Մ. Խոստեղյանը հարց ուղղեց Ընկերության ներկայացուցչին՝ լինելու է արդյոք փոշենստեցման աշխատանքներ:

Հարցին պատասխանեց Ընկերության ներկայացուցիչ՝ Գ. Հակոբյանը հայտնելով, որ ընկերության կողմից նախատեսվում է ջրցան մեքենա , ճանապարհների փոշեզանգվածի նստեցման համար

Հաջորդիվ համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և Բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ՝ Ս. Կարապետյանը հարցեր ուղղեց Ընկերության ներկայացուցչին՝

1. Երկրաբանական ուսումնասիրություն արվել է արդյոք թե ոչ.
2. Ուսումնասիրվել կամ ուսումնասիրվելու է արդյոք վարձակալվող տարածքի կենսաբազմազանությունը:
3. Հանքավայրի տարածքը արդյոք մոտ չէ արգելավայրին և օգտագործվող ճանապարհը չի հատում արգելավայրի տարածքը:

Հարցին պատասխանեց Ընկերության ներկայացուցիչ՝ Գ. Հակոբյանը հայտնելով, որ ընկերությունը պատրաստ է օգտվել առաջարկվող այլընտրանքային ճանապարհից և պատրաստ է մասնակցելու այլընտրանքային ճանապարհի կառուցմանը:

Նախագահողը հարցրեց, թե արդյո՞ք ազդակիր Վեղի համայնքի բնակիչների կողմից կան հարցեր, թե՞ ոչ: Հաշվի առնելով լսարանի դիրքորոշումը՝ հայտարարեց լսման ավարտ:

Կից ներկայացվում է մասնակիցների ցանկը՝ 1 թերթ և հանրային քննարկումների էլեկտրոնային կրիչը:

Վարող՝ Գյուղ. և Բնապահ. Բաժնի պետ՝ / / Շ. Բաքոյան

Նախաձեռնող՝ «ԱՐՄԵՆ ՍԹՈՒՆ»
ՍՊԸ-ի տնօրեն՝ / Կ. Գոմկցյան

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

«ԱՐՄԵՆ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Վեդի Գոռավան բնակավայրի վարչական տարածքում՝ Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի «Սալաքար» տեղամասի օգտակար հանածոյի հանքարդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ Վեդի համայնքի Գոռավան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում (գյուղ Գոռավան, Գևորգ Մարզպետունի 12) 29.04.2025թ. տեղի ունեցած հանրային քննարկումների /1-ին լսում/

գ.Գոռավան 29.04.2025թ.

h/h	Անուն, Ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը	Ստորագրություն
1.	[illegible]	[illegible]	[illegible]
2.	[illegible]	[illegible]	[illegible]
3.	[illegible]	[illegible]	[illegible]
4.	[illegible]	[illegible]	[illegible]
5.	[illegible]	[illegible]	[illegible]
6.	[illegible]	[illegible]	[illegible]
7.	[illegible]	[illegible]	[illegible]
8.	[illegible]	[illegible]	[illegible]
9.	[illegible]	[illegible]	[illegible]
10.	[illegible]	[illegible]	[illegible]
11.	[illegible]	[illegible]	[illegible]
12.	[illegible]	[illegible]	[illegible]
13.	[illegible]	[illegible]	[illegible]
14.	[illegible]	[illegible]	[illegible]
15.			
16.			
17.			
18.			